

Պաշտպանվե՞ք COVID-19-ից՝ Medicare-ը վճարում է պատվաստանյութի դիմաց



Medicare-ը վճարում է 2019 կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստանյութի և պատվաստանյութի ներարկմանն առնչվող ծախսերի դիմաց՝ Ձեզ համար անվճար:

Խոսե՛ք Ձեր բժշկի կամ տեղական առողջապահական դեպարտամենտի հետ՝ պատվաստումը ստանալու վերաբերյալ: Անպայման Ձեզ հետ բերե՛ք Ձեր կարմիր, սպիտակ և կապույտ Medicare քարտը, նույնիսկ եթե Դուք ներառված չեք Medicare Advantage պլանում: Ձեր մատակարարին հարկավոր կլինի Ձեր Medicare համարը՝ Medicare-ին հաշիվ ներկայացնելու համար:

- Այցելե՛ք Medicare.gov կայքը՝ COVID-19 պատվաստանյութի՝ Medicare ծածկույթի և այլ հարակից ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար:
- Մուտք գործե՛ք (կամ ստեղծե՛ք) Ձեր ապահով հաշիվը Medicare.gov կայքում՝ Ձեր Medicare քարտի պաշտոնական պատճեն տպելու համար:
- Այցելե՛ք CDC.gov/coronavirus կայքը՝ պատվաստանյութերի և COVID-19-ից Ձեզ և այլոց պաշտպանելու համար հնարավոր միջոցների մասին տեղեկություն ստանալու համար: